

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Յետադիմութիւնն և Թուրքիոյ Լուծումը.— Ապտիւլ Համիտի Դիւանագիտութիւնը.— Ակնայ Ջարդին Պատմութիւնը.— Նամակ Ակնէն.— Ակմարկ մը Անցեալին վրայ, Նազարպէկեան Կատակերգութիւնը.— Օրէնք և Կառավարութիւնը Միացեալ Տէրութեանց Ամերիկայի.— Նիւ Եորքի մէջ.— Այլեայլք:

ԵՒՐՈՊԻՈՅ ՅԵՏԱԴԻՄՈՒԹԻՒՆՆ

Ե Ի

ԹՈՒՐԿԻՈՅ ԼՈՒԾՈՒՄԸ

Այն Եւրոպան որ ստեղծեց զՅունաստան և զՊալքանեան փոքր պետութիւններն, սկսած է խօլական զղջումով մը քակել ինչ որ չինած էր: ԶՀայաստան մեռցուց, Յունաստանի հոգին բերանը բերաւ, և ո' գիտէ վաղը ինչ պիտի պատահի Պուլկարիոյ: Հօրներն առաջ թեւարկու կը լինէին տկար Ժողովուրդներուն, այժմ ոտնհար կը լինին: Այս օրերս Հանդիսի մը մէջ կարդացի թէ Պոլսոյ 1895/ հայկական ցոյցը առանց Եւրոպական թեւադրութեան եղած չէր: Իմ ենթադրութիւնս ալ այդ էր: Թող ցոյց մ'անեն, թեւադրեցին Հօրներէն ոմանք, թերեւս պղտոր ջուրին մէջ բան մը որսանք: Յոյցէն յետոյ 150,000 Հայ

արդուեցաւ, և ոչ մին ի հօրաց մատը ջկեր վերցուց մեզ պաշտպանելու: Ծիշդ նոյնն արին Յունաստանի մասին: Քաջաւերեցին զինքը Թրքին դէմ ելնելու, ելաւ, ջախջախեցաւ, և ոչ ոք կայ իրեն թեր ելնող:

Թրքի'ն թեր ելնող կայ: Մեծ Տէրութեանց մեծագոյնը, Գերմանիա, թեւ ու թիկունք է Համիտին: Գերմանիա միայնակ չէ զայդ անելու: Շարժառիթը մի' հարցնէք: Պատերազմէն առաջ որպէս թէ բարկացած էին Յունաստանի դէմ որ մեծ Տէրութեանց խրատն արհամարհելով միացած էր ի կրետէ: Նոյն Տէրութիւններն, պատերազմի վերջին շաբթուն, խրատ տուին Յունաց և Թրքաց դադրեցնել պատերազմը, Յոյնք ընդունեցան այս առաջարկ, իսկ Համիտ պատասխան տուաւ ցուրտ արհամարհանօք թէ Պայրամէն յետոյ պիտի նկատէ առաջարկութիւնը, և չարունակել տուաւ յարձակումը Յունաց դէմ, մինչև որ Տօմօքօն ալ առին: Համիտի այս յանդուգն անաստուածին դէմ բարկացա՞ն միթէ Տէրութիւնք: ո'չ, կուտուին այս նախատինքն ալ ինչպէս սովորած են երեք տարիէ ի վեր:

«Հիւանդ Մարդուն» վրայ կը գուրդուրայ Եւրոպա, չիցէ՛ թէ մեռնի: Եթէ անոր ոյժը կ'աւելնայ արիւն խմելով, թող կուտան որ ուզածին չափ խմէ: Հայ արեան գետ մը Համիտի կոկորդն ի վար վազ-

ցուցին երկու տարի չարունակ: Ապա զինքը քչքչուցին Յունաստանի դէմ, որպէս թէ դարմանին արդիւնքը փորձելու համար: Համիտ Յունաստանի վայնի վրան բերաւ: Օսմանցին որ գրեթէ երկու դարէ ի վեր յաղթութեան երես տեսած չունէր, այժանացաւ այդմ: Սովորած էր տուգանք վճարել, այժմ տուգանք կը պահանջէ. սովորած էր հող վրայ տալ, հիմա հող վրայ առնուլ կ'ուզէ,—այս ալ չնորհիւ եւրոպիոյ:

* *

Չխաբուինք սակայն երեւոյթներէն, Հայե՛ր: Եւրոպիոյ կառավարութեանց վատթարացումը իրական է, բայց թուրք կառավարութեան ուժովնալուն մի՛ հաւատաք: Օսմանցիք չափուեցան Յունաց հետ, քան զիրենք տասն անգամ փոքր շղթի մը հետ, և ուժով ելան, բայց այդ չի նշանակեր թէ Օսմ. կայսրութիւնը կենսականութիւն չահած է 1877էն վեր:

Արդէն Օսմանցւոց միակ փայլուն կողմը զինուորականն է. այդ կողմէն դիտուելով՝ բան մը կ'երևնայ, բայց պետութիւն մը լոկ զինուորութեամբը չապրիր: Լաւ Պատերազմիւր չօգտեր ուր որ լաւ կառավարել չկայ: Եւ իրողութիւնն այն է թէ թուրքիա յոռի վարչութեան պատճառով ինկած է ոչ թէ պատերազմիւր չգիտնալուն. և այսօր վարչութիւնը աւելի զեղծ ու վատթար է քան երբէք: Համիտ ջնջեց Սահմանադրութիւնը թէ Օսմանեան թէ Հայկական, և նոյն իսկ պատասխանատու դաշխիճը կամ Բ. Դուռ կոչուածը ստուերի վերածեց. ամեն բան իւր ձեռքի մէջ ամփոփած է, ինքն է միակ խորհողն ու գործիչն բոլոր կայսրութեան մէջ: Այս կերպով երկրին բոլոր բարոյական, իմացական ոյժերը սպաննելու վրայ եղած է Համիտ. նա ինչպէս զՀայ ազգը նոյնպէս և զՕսմանեան ցեղը չարաչար սկարացուց:

Այս բանը լաւ ծանօթ է Ռուսիոյ, որ թէև արտաքուստ բարեկամ և պաշտպան կը ձևանայ թուրքիոյ, նորա աւանդական մեծ թշնամին է: Յունաստանի դէմ յաղթութեամբը կրնայ Համիտ հպարտանալ և իւր զօրութեանը չափերուն վրայ սխալ գաղափար ձևացնել, բայց Ռուսիա լաւ գիտէ թէ թուրքիա 1877էն ի վեր ամեն իրօք տկարացած է: Այս պատերազմն ալ, թէև առ երեւոյթ յաջող, շատ պիտի նըպաստէ թուրքիոյ վատթարացմանը, ինչպէս նախորդ թուով կը բացատրէինք:

ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏԻ

ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻԻՆԸ

Համիտ իրազեկ է իւր կայսրութեան սպառնացող վտանգներուն և իւր կացութեան դժուարութիւններուն: Այդ ինքնին նշան մ'է խելքի: Ուստի և իւր սկզբունքն է բնաւ չաճապարել, այլ ամեն կողմ նայիլ, ամեն հնարաւոր աղբիւրէ տեղեկութիւն քաղել և խարխափելով ելք մը գտնել ամեն անձուկ պարագաներու մէջէն:

Նա երկու կողմ վը նայի, մէյ մը ներսը, իրեններուն, իւր մահմետական խորհրդականներուն և մահմետական տրամադրութեանց. մէյ մ'ալ դուրս կը նայի, եւրոպիոյ կառավարութեանց խորհրդին և տրամադրութեանցը:

Համիտ ամենեւին չի վարանիր եւրոպացի կարող անձնաւորութիւններու խրատը հարցնելու երբ պէտք կը զգայ, և իւր արտաքին յաջողութեանց մեծ դադտնիքը յայտն է. նա եւրոպական խելք փոխ կ'առնու ինչպէս եւրոպական դրամ և ռազմագէտ:

Օրինակ մը յիշենք:

Սասունի ջարդէն յետոյ եկաւ պահ մի երբ Համիտ իրօք վախցաւ թէ բան մը պիտի անէ Եւրոպա. իւր առաջին և գուցէ վերջին վախն եղաւ այդ: Լաւ մը չուարած էր: Անցեալ կոտորածոց պատմութիւնն ալ ոյժ կուտար իւր վախին: Տիար Գամպօն, Ֆռանսուական Հանրապետութեան դեսպանն ի կ. Պոլիս, 1894 Դեկտ. 7ին տեսակցութիւն մ'ունեցաւ Համիտի հետ, նիւթն լինելով Սասուն: Հայկական գործոց վրայ ինքը Համիտ կը բանայ խօսքը և իւր մտատանջութիւնը կը յայտնէ դեսպանին: Գամպօն կը պատասխանէ թէ խնդիրը կրնայ ծանր կերպարան զգենուլ և եւրոպական հսկողութիւն բերել կայսրութեան գործերուն մէջ, բայց, կ'ասէ, իւր կառավարութիւնը պատուէր տուած է իրեն այս մասին ինչ և իցէ նախաձեռնութիւն չունենալ, այլ միայն լուսաւորել Սուլթանի միտքը: «Նմա նշանակեցի, կ'ասէ, գործուած երկու ծանր սխալները. առաջինն՝ ընծայելի Պիթլիսի վալիին, որ կարող էր տեղւոյն վրայ կարգադրել Բրդաց և Հայոց միջև պատահած պահանջ-

ընդհանրապես, և որ վերածած է ցեղերու կը-
ռիւր քաղաքական յուզման մը. երկրոր-
դը՝ ընծայելի Բ. Դրան որ, քննութիւնը
հրամայուած և Անգլիոյ կողմէն ընդուն-
ուած լինելէ յետոյ, ամեն ինչ նորէն
խնդրոյ տակ ձգեալ է լրագրաց մէջ հրա-
տարակեալ ձախող պաշտօնականաւ մը:

«Սուլթանն ինչ պատասխանելով կրկ-
նեց թէ ինչ բառերով ուրացումը ուղ-
ղուած էր Դրան կողմէն առ եւրոպական
մամուլն: Պաշտօնական հաղորդագրու-
թեան մասին երկար բացատրութեանց
մտաւ, ինքզինք պատրաստ յայտարարելով
զայն ուղղելու և ինձմէ խրատ հարցաւ թէ
ինչ ձեւով պէտք էր այդ ուղղութիւնը
անել»⁽¹⁾

Ահա այդպէս վարուած է Համիտ,
մեր մեծ արիւնարուն, մեր ազգային դա-
հիւնը: Նա վերջին աստիճան զգուշաւոր ե-
ղած է, և ամենեւին շարժած չէ առանց
կանխաւ վստահութիւն առած լինելու
վստահելի աղբիւրէ թէ կրնայ յառաջ եր-
թալ անվախ: Ամենայանդուզն ջարդերու
երկար շարքի մը ձեռնարկեց և ի գլուխ
տարաւ առանց ինչ և իցէ վտանգի են-
թարկուելու, շնորհիւ իւր կանխառիկ
զգուշութեանց: Յունաստանն ալ արեան
մէջ ողողեց, և կը տեսնենք թէ մեր յու-
սացած վտանգներէն ոչ մին տեղի կ'ու-
նենայ Թրքաց դէմ: Համիտ այդ պատե-
րազմին ալ ուրեմն ձեռնարկած է հարկա-
ւոր երաշխիքը ձեռք բերելէ յետոյ:

Հիմա նկատենք մեր, հայկական, դի-
ւանագիտութիւնը. մեր Համիտին, մեր
Նազարպէկեանին ընթացքը: Ինչ հակա-
պատկեր: Նազարպէկեան, յանդուգն և
դեռահաս երիտասարդ մը կը ժպրհի Հա-
միտի հետ մրցիլ, բայց ոչ ներսը կը նայի
ոչ դուրսը, ոչ Հայ խորհողաց խրատին
կ'անսայ և ոչ եւրոպացւոց խորհուրդին
կարեւորութիւն կուտայ. առանց ո և իցէ
երաշխիքի և զգուշութեան շարժիլ կը
հրամայէ, զարնել, յարձակիլ, յեղափո-
խիլ, ապստամբիլ, առանց զէնքի, առանց
արտաքին աջակցութեան, առանց խելքի:

Ինչ զարմանք եթէ արդիւք կը լի-
նի սոսկալի կորուստ և կործանում բոլոր-
ական:

Եւ տակաւին Նազարպէկեաններ կը
գտնուին Հայ ազգին մէջ... ամօթ:

ԵԿՆԵՅ ԳԼԴԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ջարդին Կազմաւորիչ Քառեակը

Ակինը ջարդին պատրաստողն և ի գը-
լուխ տանողն քառեակ մ'էր—վաշտին հա-
զարապետը, գայմազամի տեղակալ ՀԱԳ-
Դը, որ Ակնցի Թուրք երիտասարդ մ'է,
Սէհլիկ Օղլի ՀԱՅԸՋՆ որ ազգեցիկ Տա-
ճիկներէն է, և Բահրի գատէ ԳԱՐԱ Պէ-
կը: Այս չորսին միութիւնն յառաջ բերաւ
աւերն, և Հագգըն էր այս վատթարից
վատթարագոյնը: Դոքա ամիսներով աշ-
խատեցան հազարապետն դարձի բերելու,
իրենց միացնելու, զի նա ի սկզբան Հա-
յոցս հետ շատ լաւ յարաբերութեան մէջ
էր և համոզուած էր թէ պահ ընդ պահ
տեղի ունեցող հրճութիւնը և այլ ան-
կարգութիւնը Թուրք երիտասարդաց ա-
րարքն էին որք կը փորձէին այդպէսով
զրգուել զՀայ երիտասարդութիւնը: Հա-
զարապետը քանիցս յարձակելու փորձ
փորձող Բրդաց դէմ ելած էր իւր զօրօք
և անոնց գլխաւորներն կապած, ծեծած,
ահաբեկած: Հագգը երկար թղթակցու-
թիւններով չարախօսած էր և խարբերդի
վալին համոզած թէ Հայք շատ անզուսպ
են, և մեծ պատրաստութիւն ունին և օր
մի յարկարծ Թրքաց վրայ պիտի իյնան:
Երբ հազարապետն ալ այդ երեքին ծրագ-
րին յարեցաւ վէրջապէս, այլ ևս գիւրին
էր քաղաքը զարնել անդիմադիր և ան-
պատիժ: Մանաւանդ թէ զօրաց օժան-
դակութիւնը ամեն խոչընդոտ կը բառնար
և Հայոց կողմէն ամեն դիմադրութիւն
անհաւանական կ'անէր:

Հայոց Առաջնորդը

Չմոռնանք Յոբիկեան Յակոբ վարդա-
պետը, Ակին վիճակի առաջնորդը, ծերուկ
զառամեալ և յիմար և վառ, որ մեծա-
պէս դիւրացուց ջարդը: Կոտորածը սկսե-
լու օրը, երեքշաբթի առտու, զինքը վե-
րին խուցէն կը տանին գերեզմանատունն,
հոն կը ստիպեն որ ստորագրէ թուղթ մը
սա իմաստով թէ Հայք Օսմ. զօրաց վրայ
կրակ արին: Այսպիսի թուղթ մը հար-
կաւոր էր, վասն զի նոյն առտուն կեդ-
րոնէն հեռագիր եկած էր որ եթէ բան մը
չէ եղած դեռ, ետ մնան կոտորելէ: Ա-
ռանց Յոբիկեանի այս վատ ապիկարու-

թեանը և պաշտօնական զրպարտութեանը՝ թուրքք սարսափելի ջարդին չպիտի կրնային ձեռնարկել։ Բայց երբ այս խօթամիտ ապիկարին ստորագրութիւնն առին, հեռագրեցին ուր որ անկ էր, և հրաման ստացան ողջ կամ մեռած ձեռք բերել ապստամբներն։ Յետոյ երբ այս խայտառակ եղկելիին հարցան թէ ինչ խելքով այդպիսի զրպարտութեան մը տակ ստորագրութիւն դրաւ, իրեն յիմարութեանը վայելուչ սա պատասխանը բաջաղեց որ եթէ չստորագրէր, բնաւ մարդ չէր ազատեր... Ապիկար ծերուկ, դուռն քեզ ազատել ուզեցիր ու հօտդ գայլերուն մատնեցիր, մինչ եթէ դու ո՛չ ստորագրելով զոհուէիր՝ ժողովուրդը թերեւս կը փրկուէր և դու սրբոց կարգը կ'անցնէիր։

Թրքաց Պատրաստութիւնները

Դէպքէն ութ օր առաջ պետք կը կանչեն այն թրքերն որք Բրդաց հետ առետուր և գործ ունին և կը հարցնեն թէ քանիական Բիւրդ կրնան բերել տալ իւրաքանչիւր ըստ չափու իւր ազդեցութեան կը խոստանայ 20—30 կամ աւելի Բիւրդ, և կ'երթան համոզել լեռնցիներն որ որոշեալ օրն գան, վստահացնելով գանոնք թէ այս անգամ արդարեւ պիտի զարնուի քաղաքն։ Յետոյ կառավարութիւն կը կանչէ միւթարներն և կը ծանուցանէ թէ պիտի զարնուի քաղաքը, բայց հարկ է գաղտնապահ լինիլ և ժողովուրդը պատրաստել. պատուէր տուէք, կ'ասեն, որ թուրքեր ունիցէ Հայու տէր չենեն ու չպահեն, այլ գիտցած լինին որ իրենք ալ պիտի պատժուին մահուամբ և իրենց տըներն ալ պիտի այրուին եթէ գաղտնիքը դուրս տան կամ Հայ ներս առնեն։ Նոյնպէս կ'ընտրեն ջարդի պետեր, իրենց բառով «իյիտ պաշի» որոց պաշտօն կը տըրուի իրենց խմբակներով և զօրաց օժանդակութեամբ հսկել իւրաքանչիւր իրեն խնամոց յանձնուած թաղին վրայ որ մարդ չազատի։ Նաև գետեզերն ի վար շատ տեղեր պահակներ կը դնեն որպէս զի եթէ ոմանք փորձեն ի լիւզ անցնիլ Եփրատի միւս կողմն, գարնեն։ Նոյնպէս կամուրջներն հսկողութեան տակ կ'առնուն։ Պահապաններ կը կարգեն վերի լեռան անցքերն ու կիրճերն, որպէս զի մարդ չփախչի։ Հրդեհուելու թաղերն ճշգիւ կը նը-

շանակեն և հրձգութեան յատուկ պաշտօնեաներ կը կարգեն։ Դռները խորտակելու համար 100ի շափ կացին կը բաշխէ կառավարութիւնը. վերջապէս մերձաւոր գիւղերն հրաւիրակ կ'առաքեն և «հաւատացեալներն» կը կոչեն արեան և աւարի մեծ խնճոյքին։

Շարունակելի

ՆԱՄԱԿ ԱԿՆԷՆ

Պատսպարամ մը որբոց համար

Ակն, 12 Ապրիլ 1897

Խարբերդէն մեզի հասած տեղեկութիւններուն համեմատ՝ քաղաքիս մէջ 40—50 որբ պատսպարելու ծրագիր մը կը մշակեն միսիօնարները։ Թ. Բնց սուներ հոս վարձեր են 10 լիրայի տարեվճարով մը։ Պատսպարանն երկու սեռէ որբերու համար պիտի լինի։ Դպրոցի կրթութեանէն զատ արհեստ ալ պիտի սովորին—աղջիկները՝ գորգ կամ կարպետ չինել, տըղայքը՝ կօշկակարութիւն։ Մինչև ցարդ այս որբերը այլև այլ տներու մէջ կը պատսպարուէին։ Ակէս երբէք որբ զնացած չէ ուրիշ տեղ. Զմիւռնիայէն երեք որբ ուզած էին, անկէ ալ վերջէն ձեռնթափ եղան։ Երէկ գայմագամը ասեր է Առաջնորդին թէ դուք 850 որբի և 400 այրիի ցուցակ տուիք, զոր ես Խարբերդ շրջեցի, բայց թուոյն խիստ չատուութեանը համար կասկած ունեցած են թէ արդեօք իրաւ այդքան կա՞ն. մի՛ գուցէ սխալած լինիք։ Ուղիղ է հաշիւը, չափազանցութիւն չկայ։ 1175 որբ կայ քաղաքս և չրջակայ լիճք ու Նարվեր միայն հաշուելով, որոց 95ը մայր ալ չունին։ Այս վերջիններէն են հոս խնամուելիքներն։ Գիտնալու է թէ տակաւին ներկայիս կարօտ չեղողներն դուրս կը թողունք այդ 1175 թիւէն։ Իբր 805 չափ ցորեն բաշխեցինք. անձ գլուխ 8½ ֆօլպէ, Ա. աստիճանը. ¾ ֆօլպէ Բ. աստիճանը, ևն։ 20 եզ լիճքին տրուեցան և 12 Նարվերի։

Ո՛վ որ ճամբու ծախք մը ճարել կըրնայ, քաղաքէս կը գաղթէ։ Ակը բոլորովին չիք կը դառնայ։ Այս քաղաքին պատահած աղէտը ամենէն զարհուրելին է. դուք չէք հասկնար։

ԳԱՅԼ

ԱԿՆԱՐԿ ՄԸ ԱՅԵԱԼԻՆ ՎՐԱՅ

Նազարպէկեան Կատակերգութիւնը.

(Շար. և վերջ, տես նախորդ թիւն):

Այստեղ սակայն անկողնապահութիւնը յարգելու համար ստիպուած եմ քանի մը խօսք եւս ըսել մեր գործիչներու մասին:

Պէտք է միանգամ և ընդ միշտ ընդունինք թէ Հայ ժողովուրդը մինչեւ օրս ալ երբէք չէ արտադրած այնպիսի յեղափոխական գործիչներ, որ այդ պայմանին համար պէտք եղած բոլոր բարոյական, մտաւորական և քաղաքագիտական պաշարով օժտուած ըլլային. անձնուէր, քաջ, համարձակ, պարտաճանաչ և կռուող գործիչներ չատ ենք ունեցած, բայց ինքնուրոյն կերպով գործ մը ղեկավարելու չափ մտացի, շրջահայեաց, հեռատես և խորամանկ գործիչ բնաւ չենք ունեցած: Յեղափոխական շրջանին մէջ դէպի ուրիշները նայել այն նահապետական բարեմտութեամբ և պարզասրտութեամբ՝ բնաւ ներելի չէ. ի՞նչ օգուտ որ մենք, մասնաւորապէս թիւրքահայերս, արդիւնքն ըլլալով մեր միջավայրին՝ միշտ միամիտ, միշտ բարեսիրտ և միշտ անպայման վստահութիւն ենք ունեցեր դէպի այն մարմինը, որու ո՛չ գոյնն յայտնի էր մեզ և ո՛չ ձգտումները, հերիք էր որ Րաֆֆիի հայրենիքէն էին և Արծրունու լեզուով կը գրէին և օձի նման այնպիսի անուշ լեզու մը գուրս էին ձգած իրենց բոյնէն, որ մենք ամէն բանէ յափտակուողներս խաբուեցանք և խենթիներման պարպեցինք այն թունաւոր բաժակը, որու վրայ «ազգային ազատութիւն» գրուած էր, իսկ նեօսը...

Թիւրքահայ գործիչներուս պակասութիւնը միայն այդտեղ չէր վերջանար: Ապրած ըլլալով միայն մէկ շրջանի մէջ և անծանօթ ըլլալով արտասահման նստող մարմիններու կեանքի պայմաններուն և ձգտումներուն՝ մենք այդ երկու կեանքերն իրարու հետ հաշտ ապրեցնելու պայմանը կը գտնէինք միայն այն կոյր հնազանդութեան մէջ, որ մենք՝ ինքնիրենս՝ մեր վերայ պարտք կը դնէինք առանց հորէք վայրկեան մը իսկ ընկնելու այն փորձութեան մէջ, որ այդ բանով մենք մեր ինքնուրոյնութիւնը կը կորսնցնէինք և մենք մեր ձեռքով մեզ կը գրկէինք այն շատ

մը իրաւունքներէն, որ ունէինք վերահսկող մարմնի վրայ և մեր այդ վարմունքով կ'ստեղծէինք այն մշտակայ օրէնքը, թէ մեր բոլոր գործունէութեամբ, անձնուրութեամբ հանդերձ իրաւունք չունէինք փոքրիկ նկատողութիւն մը իսկ ընելու մեր կեդրոնի դէմ, մինչդեռ միւս կողմէ մենք էինք, որ մեզմով կը բարձրացնէինք անոր վարկը, և մեր այս անհեռատես արարքով նոյն իսկ մեր ձեռքով կը կանգնէինք Հայ յեղափոխական սուլթանութիւնը, որ երթալով և մեր այդ թոյլ վարմունքէն օգուտ քաղելով պիտի կեդրոնանար էրկան մը և կնկան մը մէջ, որ պիտի կանգնէր Հայ յեղափոխական Պասթիլը, որուն անկումը սակայն, աւա՛ղ որ շատ ծանր պիտի նստէր հանուր հայութեան:

Թիւրքահայ գործիչներուս պակասութիւնը այստեղ ալ չէր վերջանար:

Ծնունդ ըլլալով հայկական թշուառութեան, Հայաստանի այս կամ այն գաւառի մէջ այդ թշուառ ժողովրդի ծոցէն դուրս եկող գործիչը փոխանակ իր շուրջը նայելու և իր մօտակայ գաւառի կամ քաղաքի գործիչին հետ ձեռք ձեռքի տուած գործելու, իրար հասկանալու, իրարու ուղղութիւնն ուսումնասիրելու և միեւնոյն գծով համընթաց յառաջ տանելու գործը, ամէնքն ալ կը զիացած մնացին, մինչև անգամ իրար ճանչնալու բաղդաւորութենէն զրկուեցան. իրարու կեղծ անունները միայն թերթերու մէջ կը կարդային և իրարու հետ յարաբերութիւն հաստատելու համար կեդրոնին կը դիմէին, բայց սա միշտ խոյս կուտար այդպիսի դեր մը կատարելէ: Այդ բանը շարունակուեցաւ ինը տարի, գործիչներու իրար ճանչնալու և ընդհանուր, միօրինակ գծով մը գործելու անհրաժեշտութիւնը զգացուեցաւ ինը տարի և սակայն անոնցմէ և ոչ մէկը խոհեմութիւնն ունեցաւ այդ ըզգացումը, այդ փափաքը իրականացնելու նախաձեռնութիւնը առնուլ աշխատիլ, որ այնքան ալ դժուար ձեռնարկ մը չէր: Իսկ կեդրոնը այդ մարդիկը իրարու չճանօթացնելով հարդերձ՝ միւս կողմէ սկսաւ մէկը միւսի բացակայութեան բամբասել, և այսպիսով առաջ տանիլ այն միապետական սկզբունքը որ կը կայանայ «բաժնէ, որ տիրես»ի վարդապետութեան մէջ: Ամեն բան լրանալէ վերջ, երբ բաղդի բեր-

մուկնքով այդ գործիչներէն խումբ մը տարբեր տարբեր ժամանակներու մէջ արտասահման եկան՝ մէկը միւսին պակաս կողմը միայն աչքի առջև ունենալով՝ սկսան իրարու վրայ խեթիւ նայիլ, իրարու ըսածին հաւատք չընծայել, ամենքն ալ երկու անձերու, կեդրոնի ամոլներու շրթունքներէն կախուիլ, անանց ականջ դնելու իրենց գործակիցներու այն զգոյշ ձայնին, որոնք այդ շրթներու թունաւոր ըլլալը կը բացադէին. սակայն այդ յեղափոխական կատակերգութիւնը չվերջացաւ, մինչև որ վարագոյրը լաւ մը բացուեցաւ, մինչև որ բեմի վրայ եկան այն նեխած մարմինները իրենց ներքին փտութեամբ, մինչև որ մեր գործիչ առաքեալները թողմասի նման իրենց մատներով չօջափեցին այդ փտութիւնը և վա՛յ տալով գլուխնուն հեռացան: Բայց չատ ուշ էր, ուրիշներու արիւնով իրենք զիրենք փառաւորող կեդրոնի երկու անձնաւորութիւնները նախապաշարման այնպիսի հաստատ տաճարներ էին կանգնեցնելու իրենց հասարակութեան մէկ մասի սրտին մէջ, որ կործանելը բաւական դժուար էր:

Պէտք է խոստովանիլ որ մեր ժողովուրդը միշտ շուտ յափշտակուող տեսակէն է, նա երբէք և ոչ մէկ օր մտքէն անգամ չէ անցուցած իր ծոցէն ծնող, իր քով գտնուող և իր ներքին ցաւերուն իսկական թարգման և իրեն հետ տանջուող գործիչներու անունը այնքան բարձրացնել, անոնց յիշատակը յարգել, որքան իրմէ հեռու ազատ երկրի մէջ շատախօսութիւններով պարապող, վերացական գաղափարներով գլուխ մաշեցնող համալսարանի համբակներու անունը, համբակներ, որոնց հայ հայրենիքն ու հայ ազգի պատմութիւնը բոլորովին անծանօթ են, որոնք աշխարհաքաղաքացիութիւն կը դաւանին և Եւրոպայի պրօլետարիատի կանգունով կը չափեն հայ ժողովրդի սնտեսական վիճակը...

Երանի թէ անցելոյն այս փոխադարձ պակասութիւնները ժողովրդի և գործիչներու կողմէ, որ այնքան սուղ նստան մեզ, քիչ չատ փորձառութիւն յառաջացնէին և ընդհանուր հասկացողութեան մը բերէին թէ՛ գործիչները և թէ՛ հայ ժողովուրդը: Այդ քայլն առնուած է գործիչներու կողմէ, նոյնը պէտք է ընէ և ժողովուրդը, որպէս զի նորէն չը կըրկնուին այն սխալները և ապագային պարապ ու անարժէք վայեր չտանք մեր գլխին: Նիւ Եորք, Ապրիլ 26, 1897 Վիթ

ՕՐԷՆՔ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱՑԵԱԼ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

(Շար. և վերջ, տես Նախորդ թիւն:)

Ազգային կառավարութիւնն որոյ նիստըն է վաշինկթըն քաղաքում, կը բաժնուի երեք ճիւղերու: Այս ճիւղերն են (Ա.) Օրէնսդիր (Legislative), (Բ.) Գործադիր (Executive) և (Գ.) Դատական (Judiciary): Օրէնսդիր մարմինն, որ կը կոչուի հաւաքաբար խորհրդարան, անդլիէն էն Գօնկրէն (Congress), կը հաստատէ Միացեալ Տէրութեանց օրէնքն, Գործադիր վարչութիւնն կը գործադրէ զանոնք, Դատական մարմինն կը մեկնէ և կ'որոշէ դանոնք:

Խորհրդարանն ունի երկու ճիւղեր, (Ա.) Միացեալ Տէրութեանց Ծերակոյտ (United States Senate) և (Բ.) Երեսփոխանաց Ժողով (House of Representatives): Երեսփոխանք կ'ընտրուին երկու տարւոյ պաշտօնէութեան համար ուղղակի Ժողովուրդէն: Ծերակոյտի անդամք (Senators) կ'ընտրուին իւրաքանչիւր Տէրութեան Օրէնսդիր Ժողովէն (Legislature) և պաշտօն կը վարեն վեց տարիներ: Միայն երկու Միացեալ Տէրութեանց Ծերակոյտի անդամներ կ'ընտրուին իւրաքանչիւր Տէրութեան Օրէնսդիր Ժողովէն, այնպէս որ մինչ այսօր 45 Տէրութիւններ կան այս երկրում, Ծերակոյտի անդամակցութիւնն է իննսուն:

Խորհրդարանն ի մէջ այլոց հետեւեալ իշխանութիւններն ունի: Հաստատել և հաւաքել հարկեր որ բաւեն Միացեալ Տէրութեանց հարկաւոր ծախուց: Փոխ առնուլ, եթէ եկամուտն պակսի: Դրամ դրօշմել: Հրատարակել պատերազմ: Հայթայթել և պահել բանակ և նաւատորմիղ և սոցա կանոններն հաստատել: Խնամել առևտուր օտար և բնիկ Տէրութեանց միջեւ: Հաստատել ընդհանուր օրէնք քաղաքականութեան, սնանկութեան, և գիւտի, և գրուածոց մենաշնորհից: Նամակատուններ սահել: Կարգել Միացեալ Տէրութեանց ստորակարգ դատարաններ:

Գործադիր (Executive) իշխանութիւնն յանձնուած է Նախագահին Միացեալ Տէրութեանց: Նախագահին պաշտօնաշրջանըն է չորս տարի և երկրորդ անգամ ընտրելի է: Կ'ընտրուի իբր թէ ժողովրդա-

կան քուէով, սակայն այնպիսի մի արտառոց եղանակաւ (ընտրողական ժողովէ) որ երբեմն փոքրամասնութեան ներկայացուցիչն կ'ընդունի մեծամասնութիւն Ընտրողական ժողովում և այսպէս կը դուրս Նախագահ, ինչպէս պատահեցաւ 1888ին:

Նախագահին յանձնուած իշխանութիւնն խիստ ընդարձակ է: Ինքն կը կարգէ ոչ միայն իւր նախարարներն, այլ նաև հազարաւոր ստորակարգ պաշտօնեաներ, թէև այժմ իւր պաշտօնեայ կարգելու իշխանութիւնն չափով մի կրճատուած է ըստ Քաղաքային Ծառայութեան Կանոնաց (Civil Service Rules): Իւր նախարարներն չեն այլ ինչ եթէ ոչ իւր քարտուղարներն և կը կազմեն միասնարար Ազգային Վարչութիւնն (The National Administration.) Սակայն այս մարմինն չունի էական նմանութիւն Եւրոպական Նախարարութիւններու (Cabinet.) Այս Քարտուղարներն պատասխանատու են միայն Նախագահին, ոչ թէ խորհրդարանին, և են պետերն Վարչութեան զանազան ճիւղերուն: Նախագահն կը կարգէ նաև, Ծերակուտի հաւանութեամբ, դեսպաններ, հիւպատոսներ, և Դաշնակցական (Federal) դատաւորներ: Նաև նոյն ժողովոյ հաւանութեամբ, կը կնքէ արտաքին դաշնադրութիւններ: Նա հրամանատար է Միացեալ Տէրութեանց ծովային և ցամաքային զօրութեանց:

Իսկ Դատական (Judiciary) իշխանութիւնն յանձնուած է Գերագոյն Դատարանին Միացեալ Տէրութեանց (The Supreme Court of the United States) և սորա ստորադաս դատարաններու: Այս դատարաններն իրաւունք ունին որոշել, մեկնել և վճռել սահմանադրական խնդիրներ և Միացեալ Տէրութեանց օրէնքներն: Բաց Աստի ասոնք իրաւասութիւն ունին երբ դատավարողը, կամ ունէ մի դատի մասնակցող, են կամ է պաշտօնեայ Միացեալ Տէրութեանց, կամ հպատակ մի օտար տէրութեան, կամ քաղաքացիք տարբեր բնիկ Տէրութեանց:

Իւրաքանչիւր Տէրութեան կառավարութիւնն կը նմանի Ազգայինին որ ի վերև նկարագրուեցաւ: Կը բաղկանայ նոյնպէս երեք ճիւղերէ, որոց անուններն ևս նոյն են: Օրէնսդիր մարմինն (Legislature) երկու ժողովներու կը բաժնուի: Պատուիրակաց Ժողով (Assembly) և Նահան-

գային Ծերակոյտ (State Senate) որոց անդամք ժողովրդէն կ'ընտրուին: Կառավարիչն և իւր պաշտօնեայք կը ներկայացնեն կառավարութեան Գործադիր ճիւղն: Իսկ իւրաքանչիւր Տէրութեան Գերագոյն Դատարանն կը ներկայացնէ Դատական ճիւղն: Իւրաքանչիւր Տէրութիւն բոլորովին անկախ է թէ Ազգային կառավարութենէ և թէ քոյր Տէրութիւններէ, այն բաներու մէջ ուր այն իրաւասութիւն ունի: Այն կը հաստատէ, իւր Սահմանադրութեան համեմատ, Տէրութեան օրէնքներն, Դատարան գայնս կը մեկնէ և վճռէ, և կառավարիչ ու իւր ստորադաս պաշտօնեայք կը գործադրեն դատարանաց վճիռն և Տէրութեան բոլոր օրէնքներն:

Թէև ի վերև նկարագրուած կառավարական մեքենայն յոյժ կնճռուտ կ'երևի, և բաւական բան կը պահանջէ քաղաքացիէն, սակայն փորձն կը ցուցնէ թէ այն լաւ յարմարցուած է այս ժողովրդի ներկայ կարօտութեանց, կ'ապահովէ հասարակաց անգին ազատութիւններն և իրաւունքներն, կ'օգնէ հանրային դաստիարակութեան և կուտայ իւրաքանչիւր քաղաքացւոյ և ընկերութեան ընդհանրապէս լաւագոյն պատեհութիւններն յառաջդիմութեան և վայելմանց:

Ս. Գ. Քէյօ ԱՊԵԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Խմբագիր ՀԱՅՔԻ.

Նիւ Եորքի առժամեայ աղքատախնամ մասնախումբը որ կազմուեցաւ նորեկ և անգործ ազգայնոց պէտքերը ժամանակաւորապէս հոգալու համար, իւր սկզբնաւորութիւնը ունեցաւ տարւոյս Յունվարի 18ին անգործներու կողմէ կազմուած ժողովի մը մէջ: Այդ ժողովի մէջ կազմուած յանձնախումբը կոչում արաւ քաղաքիս ծանօթ և կարող ազգայնոց, որք ազգասիրաբար պատասխանեցին իրենց դրամական և բարոյական օգնութեամբ:

Յանձնախումբը իրեն ընձեռնուած դոյզն միջոցներով հոգ տարաւ չարունակ աւելի քան 15 անձերու մինչև Ապրիլ 6, հայթայթելով իրենց կերակուր, պառկելու տեղ, դեղ, և այլ պէտքեր: Եղաւ ժամանակ երբ ունէր աւելի քան 25 անձեր իւր հսկողութեան տակ միեւնոյն ատեն: Բոլոր ժամանակին մէջ 36 տարբեր

անձեր ժամանակ ժամանակ պատասխարուեցան և կերակրուեցան յանձնախմբին միջոցաւ: Այդ ժամանակամիջոցին օգնեց նաև դրամով 4 ընտանիքներու, որոց անդամներու թիւը 14ի կը հասնէր: Ժամանակաւոր կամ հաստատուն գործ գտաւ 16 անձերու, և 5 անձերու ճամբու ծախք հայթայթեց իրենց տեղերն ղրկելու զայնրս, և երբ Ապրիլ 6ին իւր գործը վերջացուց, կարօտեալներու պէտքերը մեծ մասամբ թեթեցած էր, թէև կային մի քանիներ օգնութեան կարօտ, որոց մասին Յանձնախումբս անուղղակի կարգադրութիւններ արաւ իրենց պէտքերը ժամանակ մ'ես հոգալու համար:

Յանձնախումբս ամենամեծ խնայողութեամբ կրցաւ ի գլուխ հանել այս գործը, իւր ձեռքին տակ ունենալով աննշան գումար մը, ինչպէս կ'երեւի հետեւեալ ցուցակէն.

Ստացուած ամսարաժնի ձեռով կարող ազգայիններէ	\$305.50
Յուլ. 21ի ժողովին մէջ հաւաքեալ	12.68
2 անձերէ մասնաւոր նուէր	1.86
	320.94

Մեր երկուք ու կէս ամսուան փորձառութենէն սա եզրակացութեան եկանք թէ պէտք է քաղաքիս մէջ ունենալ հաստատուն մարմին մը, հոգալու համար ազգական կամ բարեկամ չունեցող կարօտ ազգայնոց, մանաւանդ նորեկներու և անոնց գործի ճամբայ ցուցնելու, և թէ այդպիսի մարմին մը պահել շատ դժուար և ծախսալից դործ մը չէ, ինչպէս շատեր կը կարծեն: Ի դիմաց Ա. Ա. Յանձնախմբի, հաշուակալ
Ս. Յ. ԷՐԿԱՆՆԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

L'ARME'NIE.

Son Histoire, sa Litterature, son role en Orient Avec une introduction par Anatole France. de l'Academie Francaise,

1897, Paris, Mercure, 8°, 90 pp.

Տիար Արշակ Զօպանեանի պատուական մէկ ատենախօսութիւնն է Հայոց պատմութեան և գրականութեան վրայ, որ ի լոյս ելած է ի Բարիզ, Ֆռանսերէն լեզուով:

Երբեակ, Նիզակակցութիւնը, Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ միջև, վերանորոգուած է վեց տարուան համար ևս:

Թղթակից մը կը գրէ մեզ Պրն. Պետրոս Հայրապետեանի նկատմամբ թէ պարկեշտ մարդ է և անոր մասին Նիւ Պրիթէնէն գրուած աննպաստ լուրը անհաւատալի կը նկատէ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Մեմոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և Հաւաքեց

Տիգրան Մ. Պետիկեան

Նիւ Եորք, 1897:

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ: Եօթը հազար բառ կայ:

Դինն է 50 սէնթ կամ 2½ ֆրանք:

Դիմել առ ՀԱՅՔԻ ԽՈՐԱԳԻՐՈՒ

341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղողին գիրք չենք կրնար յղել:

ՆՊՇԵՄԱՆՆՈՒ

Թէև շատոնց է որ այս գործը կընենք, բայց նոր խանութ մը բացած լինելով կուգենք ծանուցանել թէ Թուրքիոյ ամեն տեսակ բաներ կը վաճառենք— Պղուր, իւղ, պամիս, ապուխտ և որ ի կարգին: Անուշեղէնք—լոխում, հելվա, ևն. : Նաև ունինք ձեռագործներ, կիւլեաղի, նարկիլէ ևն. և վերջապէս ամեն բան կը գտնուի մեր քով: Մեր գներն շատ աժան են թէ հօլսէյլ թէ րիթէյլ: Օրտրներ կը յղենք ամեն տեղ C. O. D.ով: Մեր հասցէն է—

F. ZALOUM & SONS. ԱՊՈՒՆԱՍԸՐԻ
73 Washington St., New York.

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԵՄՍԵՆՑ

Տարեկան բաժնեգիրն է կանխիկ երկու տօլար (տասն ֆրանք) Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի Ս Գ Ա Ք Ր Ի Ե Լ Ե Ա Ն